



## ԴԻԶԱԿԻ ՎԱՆՔԵՐԸ

Պատմական Դիզակ գավառը մի հարուստ թանգարան է բաց երկնքի տակ, որի պատմաճարտարապետական հուշարձանները՝ քարանձավները, բերդերը, վանական համալիրները, եկեղեցիներն ու մատուռները, աղբյուրներն ու կամուրջները և ազգային մշակույթի բազմաթիվ այլ արժեքները, պահպանման և վերականգնման կարիք են զգում:

Դիզակի պատմաճարտարապետական հուշարձանները, վաղնաջկան ժամանակներից սկսած մինչև միջնադարի բոլոր փուլերը, արդյունք են Արցախյան հայության հարավային հատվածի բազմադարյան շինարարական գործունեության, վկաներն են նրա պատմական դժվարին ճակատագրի, հանուն ազատության և անկախության մղած հերոսամարտերի: Արցախի, ինչպես նաև Դիզակի ճարտարապետական դպրոցը իր զարգացման բոլոր փուլերում ստեղծագործական կապի մեջ է գտնվել Կենտրոնական Հայաստանի ճարտարապետության հետ, յուրացրել է նրա մեծ նվաճումները, դրանցով կատարելագործվել:

Դիզակի հնագույն վանքը կառուցված է երկրամասի կենտրոնում բարձրացող Դիզախալտ սարի գագաթին, մոտ 2000 մետր բարձրության վրա, և կոչվում է Կատարտ վանք:

Ըստ Կաղանկատվացու 4-րդ դարում Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը, զնալով Մազբույթաց աշխարհը, ներկայա-

նում և քարոզում է Սուրբ Երրորդությունը. նրանք սկզբում ընդունում են քրիստոնեությունը, հավատում են Քրիստոսին: Բայց բանի որ քարոզչության մեջ առում էր, Աստծո կամքն այս է, որ ամեն մարդ աշխատի յուր ձեռքով և ապրի յուր աշխատանքով, չհափշտակի, չկատարի գողություն և ավարատություն... Մտածելով, որ հայոց թագավորները փորձում են իրենց զրկել ավարատությունից («Եթե ավարատություն չանենք, ինչով պետք է ապրենք») Սանեսան թագավորի հրամանով բռնում են Գրիգորիսին, կապում ձիու «ազուց» և նահատակում:

Սանեսանի երեք որդիները՝ Մովսես, Դանիել և Եղիա անունով, հավատում են Գրիգորիսին և ընդունում լուսավորչական կրոնը, գալիս Դիզակ և բարձրանում Դիզախալտ բարձր սարի գագաթը, ճգնում այնտեղ:

Սանեսանը հավաքում է Սև հունաց ցեղերը 343 թ-ին, արշավում Դիզախալտ, անձամբ խողխողում յուր երեք որդիներին և կոտորել տալիս 3870 նորահավատ ճգնավորներին: Ապա վրա են հասնում հայոց նախարարները, սպանում Սանեսանին և բնաջնջում նրա զորքը:

Ըստ Մխիթար Այրիվանեցու 352 թվականին սարի վրա Վաչագան Գ թագավորը շինել է տալիս մի նշանավոր վանք ի պատիվ «նահատակելոց»:

<sup>1</sup> Մ. Բարխուդարյանց, Պատմություն Աղվանից, Վաղարշապատ, 1902 թ., հ. Ա., էջ 61:

Դիզափայտի անունը ստաջին անգամ հիշատակվում է «Հայամալորք»-ում «Աստղաբլուր» ձևով: «Եվ կատարեցին զսօճ սուրբ զատկին ուրախութեամբ ի տեղին, որ այժմ կոչի Աստղաբլուր»: «Եւ որքան հիւսիսոյ զորածողով լեալ, և եկն բազում բարբարոսք և ել ընդ դուռն դարբանտայ, անդ հրաման տայր զորացն սպատակ սփռեալ յերիս աշխարհն ի Հայոց, ի Վրաց և Աղուանից. և առեալ ասարս և գերիս բազումս՝ ածին առ նա: Եւ ստաքեաց բարբարոս արքայն բազում զօրս զվրնի. և հասեալ կոտորեցին առհասարակ վրան Քրիստոսի հաւատոցն. և կատարեալ ի վերայ միմեանց այրեցին զամենեւեան՝ հանդերձ միայնակեցօքն, որ անդ էին և կոչեցեալ անուն լերինն Դիզափայտ, մինչ ցայսօր»<sup>2</sup>:

Վանքի անունը հիշատակել է նաև Մ. Կաղանկատվացին, նշելով, որ դեռ Աքաաի կովկասցի ստաջ թշնամի, «խազիրների կողմից հրեկիզվեցին Կատարո վանքի կտակարանները և վկայագրերը»: Այդ փաստը վկայում է, որ Կատարո վանքում գրվել, պահպանվել են բազմաթիվ արժեքավոր պատմական փաստաթղթեր:

Դիզափայտի Կատարո վանքի և Դիզակ գավառի մասին պահպանվել են արժեքավոր տեղեկություններ հայկական ձեռագիր-հիշատակարաններում: Նրանցից մեկում նշված է. «Յիշել ի աստուածամերձ աղօթս ձեր հոգևոր ծնողն իմ հանգուցեալ ի տէր Երեմիայ եպիսկոպոս յաջորդ սուրբ ուխտին Դիզափայտ կոչելոյն երկրի Դիզափայտ»<sup>3</sup>: Դիզափայտի գագաթի հին վանքը պլերվել է. հետքերն անգամ չեն մնացել: 17-րդ դարում Տոսի գյուղացի մի քարեպաշտ տիկնոջ կողմից լեռան գագաթին կառուցվել է ներկայումս կանգուն մնացած եկեղեցին, որի ճակատին, մուտքի դուռն վերևում տեղադրված է մի քարե արձանագրություն, վանքի հիմնադրման և կառուցող վարպետի մասին: Մինչև այսօր էլ գյուղում պատմվում է այն մեծ աշխատանքի մասին, որ կատարել է այդ կինը՝ թեք լանջերով, ջորիներին բարձած տկերով ջուր, ավազ, կիր տեղափոխելով սարի գագաթը՝ եկեղեցի կառուցելու համար:

Եկեղեցին ուղղանկյուն է, երկթեք ծածկով, կառուցված է կիսամշակ տեղական կայծքարով: Մուտքը արևմտյան մասից է,

շարված մշակված քարերից, բարավորին դրված է սրբատաշ քար: Բոլոր պատերը դրված են բաց ծալի վրա: Տեղ-տեղ թափվել են անկյունաքարերը:

ՎԱՎԱՆՔԱՎԱՆՔ

Դիզակի դաշտի կենտրոնում Տահիս գետի ափին, մի գեղատեսիլ բլրակի վրա է կառուցված այս վանքը: Վանական համալիրից պահպանվել է մի եկեղեցի, որը կառուցված է սպիտակ, հարդարված տեղական քարով: Եկեղեցու շուրջը պահպանվել են շրջապարիսպների և միաբանության խոցերի, ուխտավորաց սենյակների մնացորդները վանքի հարավային փոքր խորանի մեջ ամփոփված է սուրբ Հակոբի մարմինը: Վանքը կալե խողովակներով ջուր է ստացել հարավ-արևմտյան կողմի վանաս լեռան լանջերի աղբյուրներից, պահպանվել են ջրատարի մնացորդները, որի երկարությունը հասնում է մոտ 6 կմ.: Եկեղեցու մուտքի շրջանակը մշակված է նուրբ զարդանախշերով, երիզող շրջանակը պատկերված է սրանկյուն մոտիվներով: Բակի գերեզմանաքարի վրա փորագրված արձանագրությունն է. «Այս է տալյան Պետրոս Պապին, որ է... Թվին ՌՂԸ (1649)»: Հավանաբար Դիզակի Պապին իշխանի գերեզմանն է այն:

ՕԽՏԸ ԴՈՆԻ ՎԱՆՔԸ

Դիզակի հնագույն Մոխրենես գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևմուտք Յուդասս սարի արևելյան լանջին է կառուցված այս վանքը, որը ներսից բազմաբսիդ, դրսից կլոր հատակագծով եզակի կառույց է: Վանական համալիրը բաղկացած է եղել երեք շենքերից, որից կանգուն է մնացել մեկը, մյուսներից մնացել են սուկ գետնամերձ պատերը: Արժեքավոր հուշարձանի կառուցման թվականը հայտնի չէ, սակայն ճարտարապետական ձևերի, զարդաքանդակների և ծավալատարածքի հորինվածքի դիտարկումը թույլ է տալիս այն դասելու վաղ միջնադարյան հուշարձանների շարքը:

Եկեղեցին ներկայացնում է մի վարդյակ չորս մեծ և չորս փոքր կիսաբլուրակ թերթերով: Եկեղեցու գմբեթատակ տարածությունը շրջափակված է երկու մետր հավասար բացվածքով և մոտավորապես հավասար խորությամբ չորս պալատաձև արքիդներով, ութ խոյակներով, երկուսը քանդակազարդ: Պատերի հաստությունը հասնում

<sup>2</sup> Ղևոնդ Ալիշան, Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 187:

<sup>3</sup> Լ. Աճարեան, ցուց. հայ. ձեռագ., Թավրիզ, էջ 18:

է 105—135 սմ, որը բնորոշ է վաղ քրիստոնէական շրջանին: Մուտքը արևմուտքից է, միակ պատուհանը՝ արևելյան կողմից: Եկեղեցու գմբեթը ամբողջովին փլված է, շրջակայքում պահպանվել են 10—12-րդ դարերի երկու խաչքարեր, որից մեկի վրա փորագրված է հետևյալ արձանագրութունը. «Յիշեալ Քս Ած զԱյրտ եւ ողորմեաչ», մուտք ունի թվակիր արձանագրություն ԵՃԳ. (1044 թ.):

**ԳՏՁԱ ՎԱՆԻՔԸ**

12—13-րդ դարերը կազմում են Դիզակի ճարտարապետական արվեստի ծաղկման ժամանակաշրջանը, երբ ստեղծվել է այնպիսի գլուխգործոց, ինչպիսին է Գոշա վանքը՝ լեռնային համայնապատկերի զարդը: Վանքը կառուցված է Դիզակի կենտրոն Տող գյուղից արևմուտք, Տումի գյուղի դիմացի սարավանջի մի փոքրիկ հարթության վրա, որպես միջնադարյան հայ ճարտարապետության մի յուրահատուկ համալիր: Պատմական աղբյուրներում հիշատակվել է 5-րդ դարից և կոչվել նաև Գտիշ, Քթիշ, Թիլնա:

Համաձայն շինարարական արձանագրության, այժմյան համալիրի եկեղեցին կառուցվել է 1241—1248 թվականներին Ամարասից այստեղ գաղթած Սարգիս և Վրթանես եպիսկոպոս եղբայրների կողմից, դառն ու ծանր ժամանակներում, երբ երկիրն ավերվել, հյուծվել, քաքայվել էր թուրք-սելջուկների և թաթար մոնղոլների սապատակություններից: Արձանագրության մեջ նշված է նաև նրա հարկատու կալվածքների սահմանների մասին, որը հասնում էր մինչև Արաքսի ափերը: Եկեղեցու հարավային մասում, մուտքից վեր, խաչքարի վրա փորագրված է՝ «Ի թիս ՌՂԵ (1246) ես Վրդանես կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ»:

Վանքի վիմագիր 18 արձանագրությունները հարուստ նյութ են տալիս 13—18-րդ դարերի պատմական դեպքերի վերաբերյալ և հավաստի աղբյուր են այդ ժամանակաշրջանի պատմության համար: Հնագետ Ա. Բարխուդարյանը հավաքել և հրատարակել է այդ վիմագիր արձանագրությունները<sup>1</sup>:

Պահպանված եկեղեցին ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք, մեկ զույգ որմնամույթերով և բեմի կիսաշրջանաձև ար-

սիդի երկու կողմերում երկհարկ ավանդատներով: Գմբեթն ունի զլանաձև թղթյուղ և հովիտարած ծածկ: Գալթի մուտքի շուրջը տեղադրված են սպիտակ գույնի քարեր մեծության քարեր, որոնց վրա կատարված են նրբահյուս քանդակներ:

Վանքում են հավաքված գավառի խաչքարերից լավագույնները, որոնք հրաշալի պատկերացում են տալիս այս երկրի քարագործ վարպետների աշխատանքի մասին: Խաչքարերից մեկի վրա քանդակված են տարբեր նախշազարդեր և Մուրք Գևորգ զորավարի շարձաքանդակը, աշխատանքը կատարվել է 13-րդ դարում, ադ խաչքարը անհայտ մարդկանց կողմից հանվել է պատից և տեղափոխվել Էջմիածնի Մայր Աթոռ:

Հիմնադրման ժամանակից ի վեր վանքը կատարել է մշակութային կենտրոնի դեր, ունեցել է իր գսրոցն ու գրադարանը: Վանքի գաղթականները գրել են պատմական մեծ արժեք ունեցող ձեռագրեր: 9—10-րդ դարերում արաբների և այլ նվաճողների դեմ հայ բնակչության հերոսական պայքարի մասին մանրամասն ձեռագիր արձանագրություն է թողել Գասպար քահանան:

19-րդ դարի 80—90-ական թվականներին վանքի վերջին վանահայր Առաքել վարդապետ Կոստանդյանցը կատարել է հայրենասիրական մեծ գործ. հեռանալով աշխարհիկ կյանքից, շուրջ 20 տարի օգտնվելով գրավոր և քանավոր աղբյուրներից, ժողովրդական ավանդություններից, գրել է իր երեք հատորանոց խիստ արժեքավոր ձեռագիրը: Իր տքնաջան աշխատանքի մասին վարդապետը գրել է. «Ըրը ջելով ընդ ամենայն անոտնակոխ տեղիս գաւառաց-գաւառաց և գիւղօրէից և անձաճօք վայրս բնակութեան հառց կամ արևելից ազգաց և ազանց էր, որ տակաւին թարմ էր և ի բերանս ձերունագարդ ջերմագոյն և անձանց արժանահաւատից պատմեն ի լսելիս հնասէր անձանց. և էր որ ի տան ուսմիկ և անգրագետ արանց քաղեալ ի կորուստ մատնեն ապա թէ հովանին գնոր իմն զկեանս ստանալ»<sup>2</sup>:

Իր ձեռագրի մի ամբողջ մասը վարդապետը նվիրել է վանքի պատմությանը, ցավով նշելով, որ անցյալի պատմությունից քիչ բան է մնացել: Լրացնելով այդ նա մանրամասն շարադրել է վանքի գործուներությունը 18-րդ դարում:

1716 թվականին ստանալով մեկիստության տիտղոս Դիզակի մելիք Եզանը իր հորը՝

<sup>1</sup> Տես. Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Երևան, 1982 թ., էջ 131:

<sup>2</sup> Երևանի մատենադարան, ձև. № 3966, 1:

Ղուկասին ձեռնադրում է վանքի վարդապետ, որը հովվել է մինչև 1723 թվականը: Նրան հաջորդել է Մեսրոպ եպիսկոպոսը, որը «կացեալ ի պաշտունէ հովվապետութեան ի Դիզակ նահանգի ի ՌՃՂԶ (1747 թ.):»: Նրա տառակազմարի արձանագրությամբ կարդացվում է «թէ քսան հինգ ամ կացեալ ի հովվապետութենէ ձեռամբ Մելիք Եկանոյ և ապա մեռանի աստի Սուրբ Վանս և դևի ի տապանիս», ճշտել է աթոռին ՌՃԻԲ (1723 թ.-ին):

Վարդապետը նշում է, որ վանքի վարդապետները միշտ էլ զբաղվել են ազգային պատմագրությամբ, գրի առել վանքի ձեռնարկները, նշանավոր դեպքերը, կամ «բարեգործութեան պայտուզարմ գաւառապետացն», որոնք մարտնչել են պարսից և օտար այլ նվաճողների դեմ. «թշնամեաց մերոյ քաջ ուսես թէ պարսից և թէ այլաւեոյց»:

Մեսրոպ վարդապետին հաջորդել է Արա որդի Սեմեոնը, որը մեծ ջանքեր է գործադրել վերականգնելու վանքի կորցրած կալվածքները:

Կալվածագիրը անձամբ ներկայացրել է պարսկական շահին հաստատելու: Սեմեոն եպիսկոպոսը մի քանի երևելիների հետ մեծ ընծաներով ու նվերներով գնաց պարսից թագավորի «Ծահաստան» քաղաքը Սիլևան շահի մոտ, որն էր ինքը Նադիր շահը, Արան ներկայացնելով «հաստատագիրը», խոստանալով աղոթել Արա թագավորության օգտին, որ միշտ մարտերում հաղթող լինի և իշխանության աթոռը հարստի, մնա որդոց-որդի, իրենց պահպանի «խաղաղոք»: Ապա ներկայացրեց իր խնդրանքը՝ հաստատելու վանքի կալվածագիրը, ինչպես նաև նախկին շահերի կողմից տրված արտոնագրերը: Ծահը հաստատում է կալվածագիրը: Սեմեոնը ակնատես է լինում շահի կողմից տարբեր պատճառներով բանտարկյալների տանջալից վիճակին «ի տանջանս ի գետնափոր մթին վայրս կացեալ ոմանց գլուխն կացեալ ի մարմնոյն և ոմանց ծայրատելով գմատունան ձեռացն ոտից և զականջն հատելով արձակէին և այլ բազում ժողովատեսակ մահապարտութի դատեալ և ամբոխն ցրեալ անտի և գնացին իրաքանչիւր ոք ի տունս իրեանց»<sup>6</sup>:

Վերադառնալով վանք եպիսկոպոսը հավաքում է գավառի ամեն կողմից բեկպահաներին, գյուղերի կառավարիչներին, հոգևորականներին իրագեկ պահում կնքված

թղթով վանքի իրավունքների մասին, պահանջում հարգել այն: Խորհրդակցության մասնակիցները նվիրեցին վանքին «այգիներ, պղնձեղեն, կահկարասի, կովեր և այլն: Նույնիսկ աղքատները, որոշ զոհաբերություններ կատարեցին», նշում է վարդապետը. վանքը ճոխացրին և զարդարեցին:

Այդ ժամանակներում յուրաքանչյուր գավառ իր վանքը «ծաղկեալ պահէին», ամեն ոք ցանկանում էր նվերներ տալ վանքին, բարի անուն վաստակելու, ազգին «երանական» կյանք ունենալու համար:

Սիմեոն եպիսկոպոսին հաջորդել է Հովհան վարդապետը, որի հովվության ժամանակ միաբանները սկսեցին ցրվել տարբեր կողմեր և ավելի հարգի էր սիրալիլ խոսելը, քան «զկերակուր և ըմպելիքներ» նվիրելը: Վիճակը ավելի վատացավ մելիք Եսայու մահվանից հետո (1784 թ.), վանքը սկսեց տկարանալ և նվազել օր ըստ օրե, «մնաց մի հատ եզ, մնացեալն ծախս արարին», ցավով նշում է վարդապետը: Մնաց այն պատկառագող տաճարը ավերակ: Ով մտնում էր ներս, այնտեղից դուրս էր գալիս «արտասվաթոր»:

Գտիչ վանքին կից դպրոցը գործել է մինչև 19-րդ դարի վերջը: Այդ մասին Ս. Զալալյանը՝ 1850-ական թվականների ականատեսը գրել է. «...արդեն ժողովեալ կան աշակերտք բազումք ի շրջակա գիւղօրէից. և շարունակի այժմ մասնավոր ուսմունք»<sup>7</sup>:

Սուաքել վարդապետը Վանքում մնացել և գործել է մինչև իր կյանքի վերջը, մըշտապես հոգ տարել, խնամել, որոշ փոքրածավալ նորոգումներ կատարել հուշարձանախմբի կառույցներում՝ նպաստելով դրանց գոյատևմանը: Նա հնասեր և գրասեր մարդ էր և մեծ ցանկություն ուներ ուսումնասիրել հնությունները, գրի առնել ավանդությունները, կազմել զանազան պատմություններ:

1868 թվականի երկրաշարժից տուժեց Գտիչ վանքը: Դեռևս անցյալ դարի վերջում զգացվում էր վերականգնման լուրջ աշխատանքների պահանջ: Ժամանակի ընթացքում հուշարձանախմբի անօգտագործելի դարձած կառույցները, ավելի ու ավելի են քայքայվել: Վանքը հասել է կործանման եզրին, շուտափույթ փրկություն է անհրաժեշտ:

<sup>6</sup> Երևանի մատենադարան, ձեռ. 3966, թ. 6:

<sup>7</sup> Հասան Զալալյանց Սարգիս, Ծանապարհորությունն Ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1858, պ.բ. էջ 256:

ԾԱՂԿԱՎԱՆՔ

12-րդ դարում է կառուցվել գավառի Ծակոտի գյուղի կենտրոնի վանքը: Այն արտաքուստ ուղղանկյուն խաչթևերով կառուցվածք է, սյուները, կամարները, որմնախորշերը, բեմը շարված են սրբատաշ քարերով, իսկ կողապատերը՝ տեղական կուիածո քարերով: Վանքի ձախ խորանի առաստաղին քանդակված է սովորական օձ: Խաչքարի վրա փորագրված է «Ի ՌԻԷ (1198)» հիմնադրման թվականը: Հետագայում Թաղարեցի Հակոբ վարդապետը նախկինում եղած վանքի տեղում կառուցել է նորը և թողել հետևյալ փորագրությունը. «Ի տեղի բնակութեան և սկիզբն արարեալ շինեցի եկեղեցին ի կաթողիկեն... ի թիվն ՌԸԼԱ (1682 թ.)»<sup>6</sup>:

Գավառի տարածքում կառուցվել են նաև մի քանի փոքր վանքեր: Թաղոտ գյուղի Ծմախանքը, որը կառուցվել է հայտնի վաճառական խոջա Ղազարի կողմից ՌԸԶԷ (1738) թվականին:

12-րդ դարում է կառուցվել Յոթ խաչ վանքը, որում յոթ խաչ պահպանվել է որպես մասունք ու սրբություն: Վանքի տարածքում պահպանվել են բնակելի և արտադրական շենքերի հիմնապատերը, արևելյան մասում հյուրատան, ախոռների, պահեստների ու բաղնիքի մնացորդները: 17-րդ դարում կառուցվել է Պտկաթաղի վանքը Թաղոտ և Ծակոտի գյուղերի արանքում: 14-րդ դարում կառուցվել է Սպի-

տակ խաչ վանքը Հաղրութին հարած Վանք գյուղի մոտ:

Ինչպես տեսնում ենք, գավառի հայ բնակչությունը մասնակից է եղել բազմադարյան շինարարական գործունեությանը և ստեղծել է իր ճարտարապետական արվեստը:

Պատմական դժվարին անցողարձերը իրենց դրոշմն են դրել Դիզակի պատմական հուշարձանների վրա, խնամքից ու հոգատարությունից զուրկ, դարերի լուռ վկաները մեծ մասամբ կիսակործան ու ավեր փեմակում են գտնվում: Խորհրդային կարգերի գոյության տասնամյակների ընթացքում, ոչ մի կուպեկ չի ծախսվել այդ հուշարձանների պահպանման համար, դրանք շարունակվեցին քանդվել ու ավերվել և կանգնել են իսպառ կործանումի վտանգի առաջ: Օրինակ՝ Տոմի գյուղի Կարմիր եկեղեցին (10-րդ դար): Կան բազմաթիվ փաստեր հուշարձանների ավերման, դրանց քարերի շինարարական կարիքների համար օգտագործման դեպքերի, այդպիսիք տեղի են ունեցել Հարոս գյուղատների, Տոմի գյուղի Օխտը դոնի եկեղեցիներում:

Այսպիսին է Դիզակի (Հաղրութի շրջանի) պատմական հուշարձանների տխուր վիճակը:

Ծրջանում բացակայում է հարեճիքի պատմական հուշարձանների պատմաճակարկային ժառանգության նկատմամբ հոգատարության կարևորության ըմբռնումը: Հարկավոր է, որ շրջանի բնակչությունն իր հոգածու վերաբերմունքով պահպանի այդ սրբությունները:

<sup>6</sup> Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բարու, 1895, էջ 78:

ՍԵՐԳԵՅ ԱՄԻՐՁԱՆՅԱՆ

